

ԲԱՅՆԵԳԻՆ
Ի Պաշտօնաւոր
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "

Ամերիկա
2 Տղ. 30 սենդ
ԿԱՆԻՍԻԿ




ՊԱՅՄԱՆՔ
Գրութիւնքեւ
չեն տրուիր:
Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱԲԱԹԱՆՍՆԴԵՍ. ԱԶԳՍՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿՍՆ

Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

Դ. ՏԱՐԻ ԴԵԿ. 2 ՇԱԲԱԹ 1900 ԹԻԻ 189

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ



ԳՈՒԻՏՈՆ ԻՇԽԱՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(Արժան կը համարինք մեր ընթերցողաց ներկայացնել համառօտաբար կենսագրական մէկ քանի մասերը այնպիսիւր հատորիկին, զոր Տ. Մելիք Ս. Դաւիթ-Բէկ «ԼՈՒՍԻՆԵԱՆՔ» անունով վերջերս հրատարակեց.)

«Գուիտոն-Ամբրոսիոս Իշխան Լուսինեան» արդի պետն կրտսեր ճիւղին Լուսինեանց, որոնք ուղղակի սերած են Կիպրոսի, Երուսաղէմի և Հայաստանի թագաւորներէն, ծնած է 1834ին: Իւր հայրն էր Դէորդէ-Թալիֆա՝ որ արաբերէն յաջորդ կամ իշխան կը նշանակէ, և ոսկից առաջ եկեր է զայլմա բառն և ասկէ Դալֆայեան ազգանունը: Նաբոլէոն Պոնաբարթի Եգիպտոսէն մեկնելէն քիչ ժամանակ ետքը երբ Մէմլուքները ապստամբեցան, չուզելով քրիստոնեայ իշխանութեան մը հպատակութեանը անսալ և բոլոր Դալիացիները կոտորեցին: մի քանի հաւատարիմ ծառաներ Լուսինեան Դէորդ իշխանը Եգիպտոսէն Կ. Պոլիս փախուցին, ուր ամուսնացաւ և երեք զաւակներ ունեցաւ Յովսէփ Լեւոն 1832ին, Գուիտոն Ամբրոսիոս 1834ին և Յովհաննէս Խորէն 1838ին: Առաջինը կը մեռնի ի փարիզ 1887ին իսկ վերջինը ի Կ. Պոլիս 1892ին:

«Գուիտոն Իշխան իւր եղբոր Խորէնի հետ պատանեկութեանը Վենետիկ գնաց, հոն ուսմունքը առնելէն ետքը Բարիզ գալով զայն կատարելագործեց իրեն մասնաճիւղ ընտրելով ընդհանուր պատմութիւնը և եւրոպական լեզուներ: Բարիզի Մուրատ-Ռափայէլեան վարժարանին ուսումնապետ անուանուելով, ընդարձակապէս օժանդակեց անոր յառաջգիմութեանը: Այդ վարժարանը ազգին տուաւ Մամուրեաններ, Սաքըլեաններ, Փորթուզալ Միքայելներ, Մէլքում Խաններ, Պէկեաններ, Օտեաններ, Պըյըզլեաններ և ուրիշ ասոնց նման նշանաւոր անձնաւորութիւններ: Գուիտոն Լուսինեան և իր երկու ընկերներ Գաբրիէլ վարդապետ Այվազովսքի և Սարգիս Վ. Թէոդորեան, սկսան «Մասեաց Աղանի» անունով հանդէս մ'ալ հրատարակել, սակայն միաբանութեան չափազանց կրօնասիրութիւնը կամ աւելի

ճիշդ հռովմէասիրութիւնը պատճառ եղան մեծ երկպառակութեան մը ծագմանը: Վենետիկի Աբբաճայրը և Միաբանութիւնը կողքին որ Մուրատ —Ռափայէլեան վարժարանը ընդունուին միայն հայ կաթողիկ պատանիներ, մինչ Գուխտոն Լուսինեան և իր երկու ընկերները կը փափաքէին որ առանց դաւանանքի խտրութեան ամեն հայ պատանի ընդունուին հոն, առարկելով որ դպրոցին հիմնադիր բարերարները հայոց համար բացեր էին այդ դպրոցը և ոչ թէ այս ինչ կամ այն ինչ դաւանութեան պատկանող հայ պատանիներու համար: Անկարելի եղաւ համաձայնութիւն գոյացնել, և այդ ազատամիտ վարդապետները ըստ վանական օրինաց՝ կամ հպատակելու էին Աբբաճայր և կամ բաժնուելու էին միաբանութեանէն: Վերջինը պատահեցաւ, երեքը միասին վենետիկէ բաժնուելով դիմեցին Հայոց Կաթողիկոսին և Պատրիարքին ու Հայ-Էջմիածնական վարդապետներ եղան: Յետոյ նոր վարժարան մը հիմնեցին Բարիզի Կըրընըլ թաղին մէջ 1856 թուականին, Խաճապոյն Ազգային Վարժարան անունով, որուն ուսումնապետութիւնը յանձնուեցաւ Գուխտոն-Ամբրոսիոս Իշխանին որուն բաղմամբ աշխատութիւններուն կ'աջակցէր իւր եղբայրը Իշխան Խորէն Վ. Լուսինեան: Մինչև 1859 թուականը այդ պաշտօնը վարելէ յետոյ Գուխտոն հրաժարական տուաւ իւր առողջութիւնը խանգարուած ըլլալուն համար: 1860ին ճամբորդեց Ռուսաստան, և կրկին Փարիզ դառնալով ամուսնացաւ Կոմսուհի Մարի Կոտֆրուա տը Կուփիլի հետ:

«Գուխտոն Իշխանը տասնևվեց տարեկանէն սկսեալ հրատարակութեանց ձեռք զարկաւ, զոր մինչև այսօր կը շարունակէ, և ի լոյս ընծայած է տասուէ աւելի պատմական և լեզուաբանական գնահատելի գործեր որոնք օգտակար եղած են և են այսօր ալ:

«Սուլթան Ապտ-իւլ-Մէճիտ՝ հայր արդի Սուլթանին, ի նկատի առնելով Գուխտոնի ազգին մատուցած ծառայութիւններն, 1858ին անոր պարգեւած է Մէճիտիյէի շրանշանը ուրաւ սընքը եկ-վիշ տիտղոսով. նոյնպէս ուրիշ վեհապետներ ալ և այլ շքանշաններ պարգեւած են Իշխանին: Ալեքոյանդր Բ. Ռուսիոյ Չարը՝ Իշխանին հեղինակած հայերէնէ գաղիերէն բառարանին առթիւ՝ գեղեցիկ նուէրի մը հետ Ս. Սթանիսլասի ասպետական կարգի նշանը նուիրած է իրեն:

«Աւելորդ չենք համարիր ըսել թէ Լուսինեանց այժմու ներկայացուցիչները, Գուխտոն Լուսինեան և իւր որդին Լեւոն Լուսինեան ճանչցուած են իբրև Լուսինեան իշխաններ Գաղղիայէն, Անգլիայէն, Սպանիայէն, Իտալիայէն, Գերմանիայէն, Աւստրիայէն, Ռուսաստանէն և նոյն լսկ Տաճկաստանէն:

«Իշխան Գուխտոն Լուսինեան Փարիզի շատ մը ուսանողներուն բարերարն է. անոնց կ'օգնէ ձեռքէն եկածին չափ. միշտ 5-6 ուսանողներու ամսական մեծ ու փոքր գումարներ յատկացուցած է և կը յատկացնէ, ինքն աւելի համեստ կեանք մը անցնելով: Գուխտոն Լուսինեանի տասնապատիկը կարողութիւն ունեցող հարուստ հայեր անոր ըրած բարերարութեան մէկ քառորդն իսկ չեն ըներ. իրեն դիմող ամեն ուսանողի համար անոր ձեռքը բաց է. չկայ մէկը որ իրեն դիմած և ձեռնունայն ետ դարձած ըլլայ: Ուսանողներէն զատ Փարիզ հասնող աղքատ հայերն ալ օգնութիւն և աջակցութիւն կը գտնեն իշխանէն. շատերն անոր բարեխօսութեամբ կըրցած են պաշտօն մը գտնել իրենց օրապահիկն ապահովող:

«Չկայ հայ բարեգործական ձեռնարկ մը որ Լուսինեանէ ո՛ր և է նիւթական քաշակութիւն ստացած չըլլայ»:

ԱՉԳԱՅԻՔ

Աղգ. Հիւանդանոցի որբերէն կօչակարութիւն սովորներն զգալապէս յառաջդիմած են իրենց արհեստին մէջ. Հազար պատսպարեալներուն պէտք եղած կօշիկներն իրենք շինելէ զատ, դուրսի համար ալ կ'աշխատին: Ճարտար կօշակար Տիար Դամիանոս Փափազեանի տնօրէնութեամբ իրենց արհեստը Հիւանդանոցէ դուրս ալ հաւնեցնելու կարող կըլլան: Իրենց շինած կօշիկները ծախու հանուած են հայ խանութներու մէջ, մթերանոցն ըլլալով Հիւանդանոցի գրասենեակը:

—Պարսից Շահը եւրոպական ճամբորդութեան միջոցին Դաւթէժէն անցած ժամանակ՝ տեղւոյն Կիւլպէկեան տան ներկայացուցիչ Խաչիկ Խան

Սարաճեանին շնորհեր է Շիրի Խուրչիտի Դ. աստիճանի պատուանշանը :

— Վառնայի երկսեռ Որբախնամի Գործ. Ժողովը հրապարակաւ իւր շնորհակալութիւնը կը յայտնէ այն անդամներուն որոնք թափառեցին ի վերանորոգման կը շարունակեն իրենց անդամակցութիւնը . շնորհակալութիւն կը յայտնէ նաև 70է աւելի ազգայնոց որոնք վերջերս անդամակցած են ընկերութեան :

Գործ. Ժողովը կոչում կրնէ կարգ մը ազգայնոց, (որոնց բնակարան կամ գործատեղիները ծանօթ չեն Գործ. Ժողովոյն), փութան անդամակցիլ սոյն կենսական գործին :

Մինչև այսօր սոյն ընկերութեան անունովը խնամուող որբերուն թիւը հասած է հօթնի, երկուքը աղջիկ, որոնք կը խնամուին Վանայ, Սեփաստիոյ, Ակնայ, Կեսարիոյ և Զէյթունի որբանոցներուն մէջ :

— Հայաբնակ գաւառներէն հաջորդէն աւելի գրութիւններ հասած են Պատրիարքարան, որոնք ձմեռուան պատճառով նպաստ կը խնդրեն որբանոցներուն համար :

(Այս տողերը փոխադրել որբախնամին ալ ուշադրութեանը կը յանձնենք) :

ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻԻ ԳՐԱԽԱՆՈՐՈՅՄԱՆԵՐ

Նախագահ Մաք-Քինլի ընտրութեան օրը Ամերիկայի մէջ միլիոններ անցան մէկ ձեռքէ միւսը : Մաք-Քինլի կուսակիցները իրենց բնութիւնը յայտնութեամբ բաւական հարստութիւններու տիրացան : Անոնցմէ Լուի Վորմիր անուն մէկը, 90,000 տոլար և Եագօֆ Ֆիլտը՝ 80 հազար տոլար շահած էին :

Աւելի շահեկան են հետեւեալ գրաւ գնողները . Անյալող Պրայեանի կուսակիցներէն մէկը ջուրով լեցուն տակառի մը մէջ դրուելով, վրան կոտրած հաւկիթ և ալիւր կը լեցնեն . անանկ որ մարդը հաւկիթի շաղաղուած մը կը դառնայ . պայմանին այս է եղեր : Նոյնպէս Ռամկալարաւի մը, որ ի նպաստ Պրայեանի գրաւի բռնուած էր, Նիւ-Եօքքի փողոցներուն մէջ պտտած է՝ ուղտի մօրթի մը մէջ, ձեռքն ալ հետեւեալ յայտարարութիւնը բռնած .

«Այս սպուշը՝ Պրայեանի համար քուէ տուաւ, աքացի հարուած մը իջեցուցէք կռնակին» :

Երորդ գրաւակորոյ մը՝ ի ձայն նուագարանաց ամբօխի մը առջեւէն կը քալէր, ձեռքը քարի կտոր մը բռնած, զոր կը լզէր շարունակ :

Ամէնէ ծիծաղելին հարիւրէ աւելի դրաւակորոյները են, որոնք այսօր կիսամօրուս և միապէս կը պտտին :

Թագապետական պարտէզի մը մէջ մէկը վեց ժամ շարունակ մէկ օտքի վրայ պիտի կենայ : Ուրիշ մ'ալ, Պրայեանի կորսնցուցած պարագային, փողոցին մէջ խափշկուհիի մը այտերէն պիտի պագնէր :

ձօն-Պիլգրիմսուն անուն մէկը ստիպուած է հիմա իր աղջիկը թաղապետութեան թմբկահար մուսնուկին տալ . ու եթէ աղջիկը չը համակերպի այս ամուսնութեան՝ ինքը կը պարտաւորի յիշեալ թմբկահարին քով երեք տարի սպասաւորել :

Ամենէն անտանելի կորուստ ունեցողն է՝ Ուկեր Վօրլը անուն անձը, որուն գրաւն էր, եթէ Պրայեան չը շահէ, ինքը երեսը սեւցնելով վրան մեղր պիտի քոտ ու ձեռքերը ետին կապած՝ 114 քիլո կշռող ամենաթոքեղ զօրանջը շաղկելով պիտի պտտի ամբողջ քաղաքը : Ու ցաւալին ալ այն է որ, այս միջոցին զօրանջին հետ քէն է եղեր :

Շիտակը, ասիկա ամենեւին քաշուելու բան չէ . քաղաք .

Թ. Հ.

Բոժ.— Եթէ ես Ամերիկա գտնուէի, խորհուրդ կուտայի այդ խեղացի—գաւթիւն որ, եղաւ ըլլալիք, երթայ ինքզինքը ծովը նետէ, որով թէ մրցակիցին և թէ՛ մանաւանդ զօրանջին ձեռքէն մէկ ձայնով կ'աղատի :

ԳՈՒԻՏՈՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՆՈՐ ԲԱՌԳԻՐՔ ՖՐԱՆՍԱՀԱՅ

Պատկերազարդ

Հասար Առաջին Ա—Ե

Սոյն բազիրքը որ ն. Ա. Բարձր. Իշխան Լուսինեանի երկար տարիներէ ի վեր կատարած ուսումնասիրութեանց արդիւնքը կը ներկայացնէ, այս անգամ հրապարակ ելած է 1061 երեսներէ բաղկացեալ : Սա իր տեսակին մէջ առաջինն է, որովհետեւ գիտական, բուսական, ճարտարապետական, բժշկական և այլ ամեն տեսակ անհամար բառեր պարունակելով, անոնց այլ եւ այլ իմաստները կը սորվեցնէ ոճերու մանրամասն բացատրութեամբ և գեղեցիկ պատկերներով . ֆրանսերէն և լայերէն լեզուներուն միանգամայն ծանօթանալ ու զոյններուն համար անհրաժեշտ պէտք մըն է այս : Ամբողջ գործը երկու հատորէ պիտի բաղկանայ : Ա. հատորի թղթակազմին գինն է 25 ֆրանք : Պուլկարիոյ և Ռուսմանիոյ մէջ ստանալ փափագողները պէտք է դիմեն «Հայերի» խմբագրութեան :

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԳՐՈՆԻԿ

ՄԱՔԹՈՒԷԼ

Այս էր անցեալ կերակի գիշեր Սաւաինէնի սրահին մէջ ներկայացուած տրամբ, որով «Վէ-սէլօ» հայ գերասանական խումբը իր հրաժեշտի ուղիղը կուտար Վառնայի թատերասէրներուն։ Սրահին բաղնիքիւնը այն աստիճան էր որ շատեր աթոռ չը գտնելով ստիպուեցան ոտքի վրայ կեցած հանգիստես ըլլալ ներկայացման։ Պատուաւոր և առաջնակարգ ամեն ազգէ բնտանիքներ կտրծես աւելի փայլ մը կուտային սոյն երեկոյթին։ Ներկայ էին քաղաքիս Վսեմ. Նահանգապետը, Քաղաքապետը, Զինուորական Ա. և Բ. հրամանատարները, Ընդհ. Դատախազը, Ա. գատաւորը, Անգլիոյ և Իտալիոյ հիւպատոսները, Պուլկար Աղգային պանքային տնօրէնը, վաճառականներ ևն։ Թատերախաղը որ շատ յուզիչ էր, մեծ ոգեւորութեամբ ներկայացուեցաւ եւ ստեպ ծափահարուեցաւ ընդհանուրին կողմէ։ Իբր կատակախաղ ներկայացուեցաւ նաեւ Լէպլէպիճի Հօրհօրի մէկ կտորը, որ պատճառ եղաւ ներկայից խինդին ու ծիծաղին։ Ներկայացման աւարտումէն ետքը Պ. Ա. Պէնլեան՝ ի դիմաց գերասանական խմբին սրահին դրանը առջև կեցած՝ ներկաներուն ամենքին զատ զատ շնորհակալութիւն կը յայտնէր զիրենք միշտ քաջալերելուն համար, խոստանալով միանգամայն ամրան եղանակին վերադառնալ ի Վառնա։

Խումբը երեքշաբթի օրը մեկնեցաւ քաղաքէս Պուրկարի ճամբով Զիլիպէ երթալու համար, ուր պիտի անցնէ ձմրան եղանակը։ Քաջայոյս ենք որ տեղւոյն թատերասէր հասարակութիւնն ալ գոհ պիտի մնայ խումբին ներկայացումներէն որոց ի սրտէ յաջողութիւն մաղթողներէն ենք։

ԹԻԻ 25 ԱՅՈՒՐ

ՏԱՐԵԴԼՈՒԻԸ ՄՕՏԵՆԱԼՈՒՆ ԱՌԹԻԻ

Երկու լեզուաւ (Հայերէն և Ֆրանսերէն) 100 այցաբարտը կը տպագրուի 1 1/2 ֆրանքի. դիմել խմբագրութեանս, քաղաքներու համար 1 դրուշ բոսթի ծախք. փոխարէն նամակագրոյժ ալ կընդունուի։

ՍԻՐԱՅԻՆ ԿԱՅԾԵՐ

ԾԱՎԸ

Ծովն անծայրածիր, փրոտած ի՛նչ առջեր,
Եւ անգով խաժուկ, քոյր մաւրիկոյ գե՛մ,
Սրտիս կոտայ յոյզ, հոգոյս ալ լայն թեւ.
Զիս կը զգամ ես յի հեշտանով ահշէջ։

Զերթ կի՛ն աւարածն որ կը մոգէ միշտ,
Եւ որ կը զգոյս իր հոսոյն աղոյ.
Ծովն ալ, կապուսակ, կը գրտե իմ չիշտ.
Խընկեղով իմ ծի քոյրեր կենսասու։

Ու ես, խելայեղ, ջրաս ու նրկուն.
Իր մկաններուն մէջ յոյժ, քրքուսգին,
Կոզեմ անըրջել, ճենկերուտ անհուն
Տալ ճարակ, խըմել իր սէրը անցին...

Վառնա, 5 մայիս 1898

ԾՈԹՈՐ

ԾԻԾԱՂ

ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

Պուլսոյ Պահչէ-գաբուի պողոտային վրայ Միշեր-կրական ու Սե ծով երթեկով շողենաւային եթը ութը ընկերութեանց դրասենեակները կը գտնուին, որոնց դրանը առջև (փողոցին մէջ) ցած աթոռներու վրայ նստած կը սպասեն շողենաւի տոմսակ ծախող միջնորդներու բարեժաղիկ մշակներ, որոնք անցորդները աչքէ կ'անցունեն և քաղքէն մեկնելու միտք ունեցող ճամբորդը կը ճանշնան զարմանալի յատկութեամբ մը, (եթէ մեկնողը մինչև իսկ ձեռքը ծրար կամ պայուսակ մը ունեցած չըլլայ) ու անմիջապէս անիկա կը շրջապատեն տոմսակ ծախելու համար։ Աստեք ամեն լեզուէ կը խօսին անանկ ճարտարութեամբ որ շատ անգամ ճամբորդները զանոնք իրենց ազգակից կամ քաղաքացի կը կտրծեն։ Այս մշակները երբեմն խօսք մէկ րբած առտունները խիստ կ'անուխէն կը գտնուին իրենց դործատեղին, գրասենեակները կաւեն, աթոռները կը շտկեն կը շտկուեն և ապահով ըլլալով որ մեծաւորք և դրապիրք երկու երեք ժամ անցնելէն ետքը պիտի գան անուց բացակայութենէն օգուտ քաղելով, հանդիպելիք պարզամիտ ճամբորդներու հետ զբօսներու առիթը ձեռքէ չեն փախցնէր. իսկ մեծաւորաց և դրապրաց գալու

որոշեալ ատենին քառորդ ժամ մնացած ըզբօսանքը կը վերջացնեն և ամօռակներու վրայ նստած կերևան :

— Նէ՛րէյէ կիտէճէքսին աղա :

— Թիրաբիզօնա քիթէճէղում, չաթալ սախալուն բարուրունա բինէճէղում :

— Չաթալ սագալ քիմ օլուեօր :

— Ճանըմ, բէն թանիրիմ, մէլմէթթէն քէլթուղումաէ հօնուն բարօրույլա քէլտաք, աննատուն մու :

— Աղնատում, չաթալ սագալուն վաբօրու եօգ չիմտի, պիզիմ վաբօր ըլա կիտէճէքսին, հէմ չաբըգ կիտէր հէմ տօլրու կիտէր, պիր եէրէ ուղրամաղ :

— Չանըմ, չաթալ սագալուն բարուրունա բիշ երէ ուղրամաղ :

— Ա՛ գուզում, չիմտի օնուն վաբօրու պօլուլտու, չաթալ սագալուն սագալընը թրաշ էտիպ սագալըզ գալտը, օ պէնիմ տայըմ տըր, աղնատըն մը :

Մշակներէն մին՝ ճամբորդ ձեանալով :

— Հէմէրում, հաչան թիրաբիզօնա քիթէճէքսուն՝ բիզիմ իլէ քէլմէլուսուն. բէնտէ քիթէճէլում, էմ իրահաթ էմ թօս թօղրու քիթէճէղուզ :

— Էլէթ, կէօրտիւն մի իշթէ պու առամ տա կիտէճէք, հայտէ օտայա պուլուրուն :

Նոյն միջոցին եօթը ութը ակնցիներ կը շըրջապատուին :

— Վայ հաճի աղաներ, ասանկ ո՛ւր բարով նայինք. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8 հոգի էք :

— Հիւրըրիմիւնք է, վութինք ըմմա՛ երկուքսիս եօլճի եինք :

— Շատ աղէկ, ո՛ւր պիտի երթաք :

— Մեղալօրս Գիրասուն տելլամ, մեր Ղազար էմին ալ Տրապիզօն տերթայ, անճախ, լէմսէին լօգմանթալը բարօրը կուզինք :

— Ախպար. նէմցէ եղեր ինկիլիզ է եղեր, ամենուն մէջ ալ լօգանթա կայ :

— Վախիտէ ըմպէս է ամմա՛ լէմսէյին բարօրին լօգմանթային հոտը չունին. ծառայականըս ուտելու միւճիպով չիմ ըսիր, սանկ արասա հեղ մի ան պալական չէշիտ պէ չէշիտ էփած խմորէական էվ բաթաթէզականներուն անուշ հոտը առնեմ իսէ՛ տէֆիկամ տըլլիմ :

— Անանկ է նէ մեր վաբօռովը գացէք :

— Սախըն հա՛ հաճի աղա, ատոր ըսած վաբօռը ճամբան թըս թըս կընէ, հէմ 45 տեղ կը հանգըպի, դուք մեղի եկէք, մեղի :

— Սուտ է հաճի աղա, շատ զօռլու քալեկէն՝ առած երկայն նէֆէսին ձայնն է ըսած թըսթըսը, չես հատար նէ՛ օտան եկուր տէ պատէն վար կախուած պատկերներուն մէջի մեր վաբօռները

սէյիր ըրէ, տեսնաս ի՛նտոր մուխերնին ձգեր, ելքէնին բացեր ծովէրը պատուելով կրակի պէս կը վազեն :

— Մէջի աշծիներն ալ բոստէլանին կապած, թեւերնին սօթտած, գլուխնին կապած աճէլէ թէրթիպ բաթաթէզ կըլտկեն օր իրիկուն հասցընեն :

— Հաճի աղա, դուք անոնց խօսքին մի հաւտաք, մեր վաբօռը հէմ աժան է հէմ շուտ կը քալէ, օրը օլսա մըն ալ հաց պիտի տայ, բաթաթէզին չոր հոտը փորդ կը կշտացնէ :

— Ի՛նչ կըսես Ղազար պէկ, ճապայէն օրը օլսա մի հաց կայ կըսէ :

— Հացը բարօրով երթալինիս վաճիպ է :

— Հայտէ օտան հրամմեցէք. մէյմէկ սիկառա ու խահվէ խմենք, պիլէթիլդ ալ պատրաստենք :

— Էֆէնտըմ, ի՛շ պէտք է ասանկ թախըմ՝ մի զահմէթ, հէմ ծառայականս ֆոֆսուկը թէրք առած՝ նառկիլէ կու քաշիմ :

— Շատ աղէկ, հրամմեցէք :

Եւ նեղ սանգուխէ մը կեկնեն : Նոյն միջոցին հրեայ մը կը շըջապատուի փողոցին մէջտեղը :

— Է՛, չէքմէ պէ՛, պօլլառիմի դըռաճագսին :

— Սէօյլէ պաղալըմ, նէ՛րէյէ կիտէճէքսին, վաբօռ պիր սաաթտան գալգաճաք :

— Իայպ օլմա, եէճէտէ՛ն մի եիտէճէք պու, էլէ սապահ օլսուն :

— Պու կիւն էքքէն կիտէճէք :

— Է վարսըն եիթսին, եարընքիլէ եիտէրիզ. եօռէճէք իշլէռիմիզ վառ տահա :

Ու տաւը ճամբորդք նեղ սենէկի մէջ մէջ կը լեցուին, ուր հազիւ երեք մարդ կրնար հանգիստ նստիլ, մշակներէն մին գրասեղանին գլուխը կանցնի :

— Էյ հաճի աղա, մենք քեզի նարկիլէ մը պիտի քաշիլ տայինք ամա՛ աս տեղի խահվէները շատ միւշտէրի ունենալիւն համար նարկիլէները չորս օրը հեղ մը կը մաքրեն, մարբուճները լեցուած ըլլալէն՝ կը վախնամ քի թըխ նէֆէս կըլլաս :

— Պէյիս չի կայ էֆէնտըմ, խայֆէ մի կու խուսինք :

— Շատ աղէկ, (Պատուհասէն վար պոռալով,) Գօշօ՛, գահվէլէրի հա՛նկը գահվէճիլէ սըմարլաւ տընըզ :

(Փողոցէն) — Քէստանէճի օղլունա :

— Օ էյի բիշիրմէզ, կիթ չաբըգ ասը եօգուն գահվէսինէ պէշ օն գահվէ սըմարլա :

— Իքիսինին տէ մալի պիր տէյի՛ մի եա :

— Խայըր, օ էյի դայնատըր :

— Պաշ իւստիւնէ :

Մշակին հեռանալէն ետքը :

— Է էֆէնտիմ, պիր Սէլանիկ, պըր Տրապիզօն,

գահվէլէր կէլինճէյէ գատար հիսապլարը պի-
թիւրէլիմ քի՝ ըռահաթ իչէլիմ:

Ճամբորդք տոմակաղինը վճարենէն ետքը
ի զո՛ւր կը սպասեն սուրճին գալստեանը:

(Ժողովէն ձայն մը) — Մանկիզ օղլու կէլտի՞
մի. (ստակները առի՞ք, գործը լնցա՞ւ.)

Վերէն — Չօգտա՞ն, երինի պիլէ պուլտու:

Ու յիբաւի առնուած գրամը առաջին գրա-
գրին գրասեղանին վրայ կը դրուի:

Փողոցէն — Վարձու բօսթա շանթաւունը ալ-
տը, ետրոմ սասթօտան գալգաճագ, (ըսել կուզէ
թէ մեծաւորներուն գալստեանը կէս ժամ մը-
նաց, չուտ ըրէք.)

— Վա՛յ աղալար: Վարձու գալգաճագ ըմբշ,
գահվէլէրի իչէմէյէճէիզ, նէ՞ ետքալըմ, պիր տա-
հա կէլիշինիլտէ իչէրիշ.՝ ըսելով փողոց կելնէն,
ուր նախապատրաստեալ ընկերներէն մին, «վա-
բօր իքի իւշ սասթ սօլրա գալգաճագ, աշա-
տան թէլէկրաֆա պէրլէյօր, օ վագըլթա գատար
բըռթըլարընըլը ըռահաթ վարձօրա կէօթիւրէ-
պիլիւրսինիլ:

Ճամբորդաց հեռանալէն ետքը մշակք ա-
նոնց խմցնելիք սուրճերը իրենք խմելով կը գո-
հանան, — ահա այս էր միայն իրենց շահը. ուս-
տի սրճաւանապետին միաբերան կը ձայնեն,
«Մարգար աղբար, ասլը վարըն՝ գահվէսինտէն
պիլզէ պիրէր գահվէ բիշիր»:

Ու աթոռակներուն վրայ նստած՝ կ'սկսին
դարձեալ անցորդները աչքէ անցնել:

ՏՕՄԻՆՕ

Հացկասակի մը պատասխանը

Տի՛ւին և պարոն Զ... կ'ուզէին խախիլ կո-
պէնիկ անուանեալ մէկէ մը որ շաքաթը երկու
անգամ անընդհատ առանց հրաւերի իրենց ճա-
շի կը կենար: Ուստի յետ երկար մտածութեան՝
զայն վաճառչու միակ միշտը գտան, կերակուրի
ժամանակ իրարու հետ պիտի կուտին, ու երբ անիկա
մէկուն կողմնակից ըլլար, անմիջապէս միւսը պի-
տի սկսէր անոր հա՛ւար գէշ ըսել ու առանկով ի-
րենց բարեկամութիւնը պաշտօնել, որուն հե-
տեանքը պիտի ըլլար հացկատակին անվերջ աչ-
ցելութեանց ընդհատումը:

Ահա ի՞նչպէս իրենց մտածածը գործադրե-
ցին:

Պ. Զ. — (Պժգալի կերպարանք մը առնելով)
Տիկին. տե՛ս դարձեալ ապուրը պալ ձգեր ես:

Տկն. Զ. — Ընդհակառակը, սո՛ւրբականէն սուելի
տաք է:

Պ. Զ. — Բեզի կըսեմ թէ շատ պաղ է:

Տկն. Զ. — Ես ալ կը պատասխանեմ թէ շատ
տաք է:

Պ. Զ. — Շատ պաղ չէ՞ Պ. Կոպէնիկ:

Տկն. Զ. — Շատ տաք չէ՞ Պ. Կոպէնիկ:

Կոպէնիկ — Հըմ, հըմ, երեւոյթին նայելով ոչ
պաղ է և ոչ ալ տաք, այլ՝ ըլլա է:



ԾԱԿ ԿԸ ՓՆՏՈՒՆ



Բարակները երկնալուսն պէս՝ նապաստակները փախ-
շելիք ծակ կը փնտռեն:

Լոյսը վառուելուն պէս՝ մլուկները պահուրտիլիք
ծակ կը փնտռեն:

Կատուին հօտը առնող մուկերը՝ մինչև կոյուղի-
ներուն խորքը ապաստանելիք ծակ կը փնտռեն:

Տանտիկները մառան մանկնուն պէս՝ մածունի
գողերը ծածկուելիք ծակ կը փնտռեն:

Պարտատէրները տեմուելուն պէս՝ շարտապան-
ները անբռնելիք ծակ կը փնտռեն:

Անպատիւ տուններու մէջ օձիքը ձեռք տուող «պատ-
ուսուոր» անձերը՝ վայրկենապէս կորսուելիք ծակ կը
փնտռեն:

Անոր ասոր հօգին վառող անիդճ վաշխառուները՝
արգարութեան ճանկը չի յնալու համար հրապարակէն
անհետանալիք ծակ կը փնտռեն:

(Ուսր)

2. 4.

Բոժ. — Յեղափոխութեան խաչագողներն ալ՝ ժողո-
վուրդին արդար զայրոյթէն ապատելու համար գետնին
տակը անցնելիք ծակ կը փնտռեն:

Ա. Զարպհանէլեան գրատան մէջ կը ծախ-
ուին թէ՛ պատի և թէ՛ դրպանի ամեն տեսակ Օ-
րացոյցեր: Գիները գիւրամատչելի:

Կուզէ՞ք բերնի համով ապուխտ և եր-
շիկ ուտել, գիմեցէք ի Մուսալլա Տ. Ագրի Մ.
Կիւմիւշճեանը նպարավաճառատունը, ուր չափա-
ւոր գիներով կը ծախուին առաջնակարգ մա-
նագետի մը ձեռքով պատրաստուած այս երկու
տեսակ աղանդեղէնները:

Печатница „Взаимность“ — Варна.